օրինակը մինչև ապրիլ ամսոյ վերջը ես չեմ ունեցել, որի բովանդակութիւնը մանրամասնօրէն ինձ ծանօթ չէր։

2) Արդեօք այնպէս չէ, որ իշխան Ամատունին պայմանագիրը իր մօտ ունենալով գիտէր, որ իմ պայմանագրիս ժամանակը լրանում է 1881 թ. ապրիլի վերջը։ Ուրեմն թէ բենեֆիս էր, թէ 300 ր. պէտք է ես մինչև իմ պայմանագրիս լրանալը ստացած լինէի։ Ո՞ւրեմն։

3) Ինչու երբ իշխան Ամատունուց բենեֆիսս հաշվին փող եմ խնդրում, նա իմ միամտութիւնից օգուտ է քաղում, և ինձ «մայիս ամսուայ ռոճիկը ստացայ» ստորագրել տալիս, քանի որ իմ պայմանագիրս վերջանում էր ապրիլի վերջին, որը նա գիտէր, բայց ես չը գիտէի, քանի որ նա ինձ բենեֆիսի գոնեայ գումարը պարտ էր վճարելու։

4) Արդեօք բոլոր անցածը ի նկատի առնելով, որի մասին ես գրել եմ, և տեսնելով որ իմ պայմանագրիս ժամանակը լրացել է, երբ ես գրում եմ իշխան Ամատունուն, որ մայիս ամսուայ համար ինձ ապահովացնէ, որովհետև ես պայմանագիր չունէի մայիս ամսուայ համար—այդ յանցանք է։

5) Եթէ ես անցեալից խրատուած օգուտ եմ քաղում իմ դրութիւնից, որ պայմանագիր չունեմ, և էլ չեմ կամենում առանց դերեր ունենալու 150 ր. ստանալ և իշխան Ամատունու ձեռքին խաղալիք լինել, միթէ այդ յանցանք է. և ով կարող էր ապահովացնել, քանի որ ոչինչ պայման չը կայ, թէ իշխան Ամատունին ամբողջ մայիս ամսուայ ընթացքում ինձ մի որ և իցէ նշանաւոր դեր կը տայ. միթէ կարելի չէր սպասել, որ նա ինձ մի աղախնի դերում, կամ կենդանի պատկերում դուրս կը բերէ։

6) Թող իշխան Ամատունին մայիս ամսուայ ռոճիկը տուած համարէր, միթէ նա ինձ մայիս ամսուայ համար պարտական չէր ապահովացնելու։ Կրկնում եմ, ապրիլի վերջին լրանում էր իմ պայմանագրի ժամանակը, ես ոչ իմ բենեֆիսս էի ստացել, ոչ էլ բենեֆիսից հասանելի մնացած գումարը, իսկ ես իշխան Ամատունուց ոչինչ ստորագրութիւն չունէի և ոչ ունեմ. ստացայ պայմանագրիս օրինակը, բայց իշխանը աւելորդ էր համարել իր անունը ստորագրելու։ Ուրեմն ես մայիս ամսումը որ թղթովը պէտք է իշխանից ինձ հասանելին պահանջէի, և ինչու պէտք է ես առանց պայմանի ծառայէի, թող ռոճիկը 150 ր. հաշուէին, դրա դէմ չէի։ Մթթէ—հէնց ես պարտական եմ միշտ ազնիւ խօսքով բաւականանալ։

Իշխան Ամատունին իմ նամակիս չը պատասխանեց, ինձ հետ ոչինչ չը խօսեց, ես հասկացայ որ նա ինձ ոչ բենեֆիս է կամենում տալ, ոչ մայիս ամսի մէջ կամենում է պարտաւորվել ինձ դերեր տալու, ուրեմն լռութեամբ ինձ հասանելի փողից յետ է առնում մայիս ամսուայ համար գրած ռոճիկը, որով մատնաժողովին մընում է 150 ր. և իշխան Ամատունին ազատվում է ինձ դերեր տալու պարտաւորութիւններից, որով մենք բաժանվում ենք միմեանցից։ Բայց իշխանը իր նպատակին այդ կողմից հասնելուց յետոյ, հարկաւոր համարեց իմ վարկը վայր ձգել հասարակութեան առաջ։ Կախեց թատրոնի պատերին յայտարարութիւն և մինչև օրս չարունակում է ինձ դէմ իր գործը։ Այս ամենս որ մատնաժողովի մատեանների մէջ չը կայ, հասարակութեան դատողութեանը թողնելով, հարցնում եմ իշխան Ամատունուց։ 1) Ի՞նչ է պատճառը որ ամբողջ սեզոնում ինձ դերերից զրկեցիք, այնպէս պիէսաներ գրիք, որ ես դեր չունենամ։ 2) Ինչու երբ ինձ են ծափահարում, միշտ վարագույրը արգելքներ է գտնում բարձրանալու։ 3) Ինչու ուրիշների բենեֆիսների համար աշխատում էիք, իսկ իմ մարտի 2-ին բենեֆիսս որչափ էլ որ աշխատում էի, որքան էլ որ մարդիկ գնում էին թատրոն տոմսակ առնելու—միշտ ասում էին՝ կասսայում տոմսակ չը կայ. սրա համար վկայներ շատ կան, այնպէս որ ես կարծում էի թէ տոմսակները ծախվել են, իսկ մարտի 1-ին երեկոյեան անձամբ կը գնամ կը տեսնեմ, որ կասսայում լիքն են տոմսակները, այնպէս որ եթէ ներկայացումը տեղի ունենար նոյն երեկոյեան թատրոնի դահլիճը կէսից աւելի դարդակ պէտք է լինէր։ 4) Ինչու ապրիլի վերջին ներկայացման ժամանակ դուք կանգնած էիք կուլիսումը և ժողովուրդը բոլոր ժամանակ ինձ դուրս էր կանչում, բայց պ. Սարդարեանցը, կուլիսի յուշարարը զանգը չէր խփում ինձ համար, ինձ դուրս չէին թողնում։

Այս ամենը կրելով, ես մինչև ապրիլի վերջը, ինչպէս իմ պայմանագրիս ժամանակը, կատարեցի իմ պարտաւորութիւնս, իսկ ինչ վերաբերում է մայիս ամսոյ 150 ր. փողը դուք պահել էք ձեզ մօտ, ես ոչինչ աւելորդ փող չունեմ ստացած։

Անցածը բոլորը անցել էր, իշխան Ամատունի, դուք ձեր պատուին դէմ չը համարեցիք արգելք դնելու, որ քաղաքային թատրոնը ինձ տան, դուք արգելեցիք դերասաններին որ դան իմ ներկայացման մասնակցեն, աֆիշաները պատերից սկսան պատռվել, ներկայացման երեկոյեան տարածեցին, որ ներկայացում չը կայ.... ներկայացումը եղաւ և չը տեսնված համակրութիւն ստացայ Թիֆլիսի պատուելի, սիրելի հասարակութիւնից և քաղցր մնաս բարևներով հեռացայ Թիֆլիսից—իսկ ձեր ինձ դէմ վատութիւնը մնաց։ Դուք մտածեցէք, իշխան, ձեզ շրջապատող այդ մի քանի պարոններին պատիւ է բերում, քաջութիւն է դրանց կողմից, մի կնոջ պատին կպչել, որը իրենց ոչինչ չէ արել։ Ազնիւ խմբագրապետ, այս անգամ էլ ձեր համբերութիւնը փորձելով, խնդրում եմ հիւրասիրէք այս իմ նամակս ձեր ազնիւ թերթի մի անկիւնում, որով կը մնամ ձեզ շատ շնորհակալ։

Աստղիկ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱ

Այն բանտը, որտեղ կալանաւորված է յանցաւոր Գիտօ, պահպանվում է երկու խումբ զինուորներից։ Ժողովուրդը այնքան զայրացած է, որ երկիւղ են կրում, թէ նա կը սպանի յանցաւորին, Լինչի դատարանին ենթարկելով։ Կառավարչական բոլոր հիմնարկութիւնները փակված են։ Մինիստրները չեն դուրս գալիս Սպիտակ տանից։ Ցանցաւորի մօտ նամակներ են գտնված, որոնցով նա յայտնում է իր մտադրութիւնը նախագահին սպանելու մասին։ Ցանցանքից առաջ մարդասպանը մի կառք էր վարձել և պայմանաւորվել էր կառապանի հետ, որ երկաթուղու կայարանից դարս գալուց յետոյ շուտով նրան տանէր գերեզմանատունը։ Միևնոյն ժամանակ մարդասպանը մի երեխային թղթեր էր յանձնել, որոնցից երևում է նրա խելագարութիւնը։ Քննութեան ժամանակ Գիտօ յայտնեց, թէ նա մտադիր էր սպանել նախագահին Լոնգ-Բրենչ ամարանոցի մէջ, որտեղ բնակվում էր Հարֆիլդի կինը, բայց վերջինի հիւանդոտ դէմքը այնպիսի տպաւորութիւն գործեց յանցաւորի վրա, որ նա չը կատարեց իր մտադրութիւնը։ Ցանցաւորը այժմ հանգիստ է և ժամերով լուռ է մնում։ Նա մի քանի անգամ խնդիրք էր տուել իրան թոշակ նշանակելու մասին։ Բժիշկները յայտնել էին Գիտօի խելագարութիւնը և այդ պատճառով նրան թոշակ էր նշանակված։ Գիտօ ամբողջ օրերով նստում էր Սպիտակ տան դրան մօտ և տեսութիւն էր խնդրում նախագահից։ Նա Հարֆիլդին հետևեալ բովանդակութեան նամակ էր ուղարկել. „Ցաւում եմ, որ անբաւականութիւն ունեցաք կօնգլինկի հետ։ Դուք արդար էք և կը պահպանէք ձեր դրութիւնը։ Դուք կարող էք յոյս դնել թէ իմ և թէ բոլոր պատուաւոր քաղաքացիների պաշտպանութեան վրա։ Ցանկալի կը լինէր մի քանի րոպէով ձեզ հետ տեսնվել։“ Նախագահը նրան ոչ մի անգամ չէր ընդունել։

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիայի մէջ մեծ պատրաստութիւններ են տեսնվում Բաստիլիան վերցնելու տարեդարձը յուլիսի 14 տօնելու համար։ Հանդիսի պաշտօնական նախագիծը արդէն հրատարակված է։ Մինիստրները իրանց տոմարադրեալներին հրահանգներ ուղարկեցին, որպէս զի վարչութիւնները անպատճառ մասնակցեն տօներին։ Մինչդեռ հասարակութեան տրամադրութիւնը չէ համապատասխանում իսկական տօնի պայմաններին։ Արտաքին անօրինակ դժուարութիւնները և հոգսերը կատարելապէս գրաւում են հասարակութեան ուշադրութիւնը և անբաւականութիւնների առիթ են տալիս։ Ֆրանսիական այժմեան մինիստրութիւնը իր կոչումից ստոր յայտնվեցաւ, իսկ մի ուրիշ աւելի եռանդոտ և գործունեայ մինիստրութեան կազմելը անյարմար է համարվում մինչև պատգամաւորների նոր ժողովը, որոնք ափսոսում ու ողբում են Ակոր և Առաքել վարժապետների ժամանակները, վասակար պիտի համարեն ամեն մի մարդու, որ վերոյշեալ հայեացքներն ունի աշխարհաբառի և նորա գործածութեան վրա։ Ինչ ուրախ է «Փարոսի» Մոծակը, որ ես երկար չը մնացի Էջմիածնի ճեմարանում. այո՛, պարո՛ն Մոծակ. ես աշխատում էի ազդել աշակերտների վրա այդ հարցի վերաբերմամբ իմ տեսակէտից, բայց նոցա գլխիցը հանել գրաբառի սովորելու հարկաւորութիւնը (մի վախէ՛) ես չէի կարող, քանի որ ինքս բաղդ ունեմ փոքր ինչ հասկանալու գրաբառի դերը և նշանակութիւնը։ Բայց այդ չէր Էջմիածնից իմ հեռանալու պատճառը. ինձ ոչ թէ այնտեղ վարժապետ չընդունեցին, այլ...բայց ես ամաչում եմ լրագրական վսեմ խօսքը ծառայեցնելու ստախօսութիւնների դէմ պաշտպանվելու համար. եթէ դուք իմացաք իմ Էջմիածնից հեռանալս, ինձ շատ լաւ յայտնի է որ դուք կարող էիք իմանալ և իմ այնտեղից հեռանալու իսկական պատճառը. եթէ ձեզ հարկաւոր էր յայտնի պատճառներով աղաւաղել ճշմարտութիւնը, այդ ձեր «երկու բարեկամների» փոքրիկ խօսակցութեան մէջ առաջին օրինակը չէ։

Շատ ափսոսում եմ որ ստիպված էի մոցնել այստեղ այս քանի տողերը. բայց ինչ արած. շարունակենք մեր այս տողերով ընդհատված խօսքը։

«Փարոսի» պ. Մոծակը*) և մեր նախնիքների փէչերը ձեռքից չը տուող ուրիշ հնասէրները կարծում են թէ գրականութեան մէջ աշխարհաբառի գործածութիւնը քարոզողները ծածկում են դորանով իրանց գրաբառի չիմանալը. եթէ, ճշմարիտ, այդպէս նայելու լինենք մեր այժմեան գրողների լեզուի վրա, պիտի ենթադրենք որ «Փարոսն» էլ խառնում է գրաբառը աշխարհաբառի հետ իր գրաբառ լեզուի քաջ իմանալը ցոյց տալու համար։ Այդ շատ ուրախալի է, որ «Փարոսը» լաւ գիտէ գրաբառը, բայց հաղիւ թէ նորա բաժանորդների գիտաւորութիւնն է, ստորագրվելով «Փարոսին», սովորել նորա միջոցով հին հայերէնը, ո՛չ. բաժանորդների համար հարկաւոր է բովանդակութիւն, ընթերցանութեան նիւթ և պատկերներ։ Ուրեմն այստեղ խօսքնիս ինքն ըստ ինքեան դառնում է «Փարոսի» բովանդակութեանը, որի մասին հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել այստեղ։

Այդ բովանդակութիւնը անբովանդակ բառով կարելի է համարեա բոլորովին որոշել. բայց ինչ անես. մարդկանց մեծամասնութիւնը առհասարակ մեծ կարծիք է ունենում իր գործունէութեան վրա, և այդ պատճառով շատերը բէքէֆ են լինում, երբ որ համարձակվում են քննադատութեան ենթարկել նրանց գործը։ Ահա ինչ տեսակ կարծիքներ են մինչև այժմ յայտնված «Փարոսի» բովանդակութեան մասին. այդ կարծիքները յառաջ է բերում պ. Զ. Մսերեանցը («Փարոս Հայաստանի» 1881 № 1. երես 15). «Մօսկվայի մեր ազգայիններից ասողք եղան՝ թէ մեր հանդիսի մէջ կարդալու բան չը կայ.... իսկ ոմանք համարձակեցան ասելու նաև՝ թէ մենք «Փարոսը» մեր քէֆի համար ենք հրատարակում.... Ահա ազգասէրներ, բացականչում է պ. Մսերեանցը, ահա համալսարանական ուսմամբ զարգացած անձինք, ահա լուսաւորեալ համարված կրթիչք մեր մատաղ սերնդին....» «Բայց—շարունակում է պ. Մսերեանցը յառաջ բերելով մի ուրիշ կարծիք—թո՛ղ ներուի մեզ ի մէջ բերել այստեղ Փարիզից գրված մեր մէկ ազնիւ և գիտուն ազգակցի նամակից հետևեալ քանի մի տողերն, որք նուիրված են «Փարոս Հայաստանի» հանդիսի առաջնակարգ գործունէութեան և որք ճիշդ նկարագիրք են նորա ցանկութեանց և ձգտողութեանց։

«Փարոս» այսուհետև առաւել ևս սիրալի պէտք է լինի ամենայն հայու, գրում է մեր ազգակիցն, որովհետև հայուհոյ մը սիրան է որ պիտի կենսաւորէ դայն, և հայ սրտերի պիտի ներշնչէ զերկնատիպ աւիւն առաքինութեան, բարոյականի և ազգասիրութեան։

«Փարոսն» մի ծաղիկ պիտի լինի քաղցր վասն հայրենեաց, որ պիտի բուրէ հայ Եդեմին գարնանափայլ զեփիւռը։

«Փարոսն» վերջապէս պիտի ներկայացուցանէ հայ դպրութեան մի նոր փառքը, հայ խմբագրուհի մի, սիրելի և ակնածելի իւր տաղանդովն, իւր հայրենասիրութեամբ և իւր շնորհաղեղ անունովը՝ որ զիմաստութիւն կը ծաւալէ։

«Դուք աշխատեցայք «զ Փարոս» առնել շահաւէտ ազգին, իսկ հանճարափայլն Ձեր Ամուսին՝ պիտի նոր փառք և պատիւ աւելացնէ ազգին յաչս օտարաց, ապացուցանելով՝ որ հայուհիք գիտեն ո՛չ միայն սրտիւ՝ այլ և գլխաւ մրցել ընդ եւրոպուհիս»....

Ճշմարիտ որ այսպիսի մի կարծիք մէջ բերելուց առաջ հարկաւոր է ներողութիւն խնդրել, այսպիսի վայրենի՝ ասիական շողոքորթութիւններ անելը ամեն մի փոքր ի չատէ բարեկիրթ մարդու համար ամօթ է, բայց նրանց լսելը և առաւել սեփական թերթում տպելը աւելի քան ամօթ է՝ դա խայտառակութիւն է և նախատինք հրապարակական խօսքին. եթէ այդպիսի խայտառակ շողոքորթութիւններ անողը արժանանում է հրատարակչի կողմից ազնիւ և գիտուն ածականների, ապա ինչքան պարզամիտ և անհեռատես պիտի լինի մարդ, որ քննադատութեան ենթարկէ «Փարոսը» և նրա բովանդակութիւնը։ Տէր Աստուած. դեռ ինչ խանձարուրի մէջ է գտնվում մեզանում հրապարակական խօսքի դործածութիւնը և քննադատութիւնը։ Թող տպէ «Փարոսը» զանազան տուտուց և անբովանդակ ոտանաւորներ, շողոքորթութիւններով, մեծածայն, բայց փոքրանշանակ խօսքերով լի կենսագրութիւններ և նկարագրութիւններ, թող զարդարէ «Փարոսը» իր էջերը զանազան հանդէսներից առված նկարներով, հողագործ բուլդարների, Հազրաթը Վալայ Զէլլա-Սուլթան, Սուլթան Մասուդ Միրզայի, Մարոկկոյի սուլթանի և նրա կանանց և այլն պատկերներով. մենք ոչինչ ասելու իրաւունք չունենք. «Փարոսը» միշտ կարող է իր սեփականութեան իրաւունքը բանացնել և կը դտնի էլ զանազան Մ. Զ-ներ *) և «ազնիւ ու գիտուն» ազգակիցներ, որոնք կը ծափահարեն և կառաջարկեն որ «Փարոսի» պատուելի հրատարակիչը չը յուսահատվի մի քանի վայր ի վերոյ **) խօսքերից, այլ ընդհակառակն հաստատ քայլերով առաջ գնայ իր «ազգօգուտ գործունէութեան ասպարիզում» եթէ այդպէս են հասկանում մեր խեղճ ազգի օգուտը, կարիքները և պահանջները, թող շարունակէ ուրեմն «Փարոսը» իր այդ ազգօգուտ գործունէութիւնը, թող տպագրէ ոչ միայն Սամարկանդի, ***) այլ և Կեախտի ու Ներչինսկի վաճառականոցները, պարսից Շահի և տաճկաց սուլթանի կանանոցները և այլն. մեզ մնում է միայն լռել, որովհետև «Փարոսի» խմբագրութիւնը մեր նախընթաց յօդուածի առիթով արդէն խոստանում է որ մի և նոյն է՝ նրա համար մեր խօսքը կը լինի «ձայն բարբառոյ յանապատի»։

Մօսկվա. Սարգիս Սարգսեանց

*) Որը, ի միջի այլոց նկատենք, գուցէ իր սրախօսութիւններին աւելի ոյժ տալու համար, գրում է իր «Երկու բարեկամների» խօսակցութիւնը Թիֆլիսի բարբառով. բայց, պարոն, հարկաւոր է առաջուց սովորել և յետոյ գրել այդ բարբառով. միմիայն իժումն պարուն դեռ չեն կազմում Թիֆլիսի բարբառը. դուք սասիկ աղաւաղում էք այդ ուժեղ՝ կենդանի հայ բարբառը խառնելով նորա ձևերը գրականական լեզուի ձևերի հետ. Թիֆլիսեցիք չեն ասում՝ կարդացել, խօսացել, այլ՝ կարդացիլ, խօսացիլ, չեն ասում՝ կասես, այլ՝ կիսաս և այլն։

*) «Մեղու», 1881. № 65.—**) Այդպէս զբանք կանուանեն ճշմարտութեան խիստ ուղիղ խօսքը։—(***) «Փարոս Հայ.» 1881. № 1.